Բ ա ց մ ա ն  ա ր ձ ա ն ա գ ր ո ւ թ յ ո ւ ն

«ԳԿԾՀԲՀ-ԳՀԱՊՁԲ-26/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Գյումրի

18 հոկտեմբերի, 2019 թ., ժ 11:00, ք. Գյումրի, Վարդանանց հրապարակ 1, «Գյումրու կոմունալ ծառայություն» ՀԲՀ

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Շաբոյան – «Գյումրու կոմունալ ծառայություն» ՀԲՀ-ի տնօրենի տեղակալ,

Հանձնաժողովի անդամներ՝

Ռ. Եգորյան – «Գյումրու կոմունալ ծառայություն» ՀԲՀ-ի մատակարար,
Ս. Կարապետյան-«Գյումրու կոմունալ ծառայություն» ՀԲՀ-ի բրիգադիր,

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ

1. «ԳԿԾՀԲՀ-ԳՀԱՊՁԲ-26/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջարկների բացման վայրի, գնային առաջարկների ներկայացման, գնահատման, արդյունքների հաստատման /մրցույթի արդյունքների ամփոփման/ մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 Գնային առաջարկ ներկայացնելու մասին 11.10.2019թ. էլեկտրոնային եղանակով ընթացակարգի հրավերի տեքստը հրապարակվել է www.gnumner.am ինտերնետային կայքում:

1.2 Գյումրի համայնքի կարիքների համար «դիզելային վառելիքի» ձեռքբերման համար «ԳԿԾՀԲՀ-ԳՀԱՊՁԲ-26/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի համաձայն գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Մասնակցի | | |
|---|---|---|
| | Անվանումը | Հասցեն |
| 1. | «Մաքսօիլ» ՍՊԸ | Ք. Երևան Տպագրիչների 8 |
| 2. | | |

1.3 Գնային առաջարկ պարունակող հայտերը բացվել են գնահատող հանձնաժողովի կողմից:

1.4 Տվյալներ հայտերի ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին

- Մասնակցի հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

1.5 Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

- Գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը ներկայացրել է գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, գնի առաջարկ և հրավերով պահանջվող փաստաթղթերը: Փաթեթում ներկայացված փաստաթղթերի բոլոր էջերը ստորագրված և հաստատված են մասնակցի կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

1.6. Մասնակցի առաջարկած գինը

ՀՀ դրամ

| Հ/Հ | Աշխատանքի անվանում | <<Մաքսօիլ>> ՍՊԸ | | |
|---|---|---|---|---|
| | | ԱԱՀ | Միավորի արժեքը առանց ԱԱՀ | Միավորի արժեքը՝ ներառյալ ԱԱՀ-ն |
| 1. | Դիզելային վառելիք | 65 | 325 | 390 |
| 2. | | | | |
| 3. | | | | |

Հանձնաժողովը արձանագրեց, որ

ա) հայտ է ներկայացրել «Մաքսօիլ» ՍՊԸ-ն, որի ներկայացրած գնային առաջարկը Պատվիրատուի մոտ առկա նախահաշվային գնի սահմանում է:

Հանձնաժողովը որոշեց՝

ա) որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից առաջին տեղը զբաղեցրած ճանաչել «Մաքսօիլ» ՍՊԸ-ին և ուղարկել ծանուցում՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը: Պատվիրատուն էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Սահմանված ժամկետում մասնակցի կողմից փաստաթղթերը չներկայացնելու դեպքում կամ հարցման բացասական պատասխանի դեպքում, հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի հայտը և փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին:

բ) Հանձնաժողովի հաջորդ նիստը կկայանա 2019 թ. հոկտեմբերի 24-ին ժամը 15:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

Հանձնաժողովի նախագահ՝ ---------------------------------- Ա. Շաբոյան (ԳՊ/ԳԱՊ)

Անդամներ՝ ---------------------------------- Ռ. Եգորյան (ԳՊ/ԳԱ)

---------------------------------- Ս. Կարապետյան (ԳՊ/ԳԱ)

Քարտուղար՝ ---------------------------------- Ա. Սարգսյան (ԳՊ/ՄՀՄ)